ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» սեպտեմբերի 2023 թ. N 67-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ա որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «Ս. Յա. Ժուկի անվան «Գիդրոպրոյեկտ» նախագծահետախուզական և գիտահետազոտական ինստիտուտ» բաժնետիրական ընկերությանը «Իրան-Հայաստան միջպետական «Մեղրի 1» ԲԼՕԳ 220կՎ հենարանից 220/110/10կՎ, 125մՎԱ «Քաջարան» ենթակայան և սնուցման գիծ» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական բաժինների մշակում» գործունեության տեսակի «Էներգետիկ օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր» ենթատեսակի և «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննում» գործունեության տեսակի համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի ապրիլի 1-ը:

3. Տրամադրել Իսպանիայի Թագավորության «Լևանտինա ինխեներիա կոնստրուկսիոն Ս.Լ.» ընկերությանը «Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կառուցում, ներառյալ ճանապարհային մաս, արտաքին լուսավորություն, ջրահեռացում, ուղեանց և հենապատեր» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Տրանսպորտային», «Հիդրոտեխնիկական» և «Էներգետիկ» ենթատեսակների համար:

4. 3-րդ կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2024 թվականի հոկտեմբերի 31-ը:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9/19/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ